Լստ «Արք» օրաթերթի, ուխտագնացութեան օրերուն յատուկ ձեռնարկով մը նշուած է նաեւ Արաքի հայկական միջնակարգ դպրոցի հիմնադրութեան 95ամեակը, որուն ընթացքին ներկայացուած են երգչախումբային ելոյթներ, արտասանութիւններ եւ ուղերձներ: Սեպուհ արք. Սարգիսեանի գլխաւորութեամբ ուխտաւորները այցելած են նաեւ Արաքի հայկական գերեզմանատուն, ուր հոգեհանգստեան արարողութիւն մատուցուած է իրանահայ մշակութային եւ կրթական գործիչ Արմենակ Մաքսապետեանի յիշատակին:

ՏԵՍԱԿԷՏ

Պեյրուբ, 30 յուլիս 2003

Յարգելի խմբագրություն «Ազգակ»:

Պետր կա յ ըսելու, քե մեծ յափշտակու-
թեամբ կը կարդամ ձեր բնույն աշխատակի-
ցին՝ իմ վաղեմի բարեկամին՝ Յակոբ Պալեա-
նի սրտացու յօդուածները, որոնք շատ յաճախ
կը վերաբերին լեզուական ազաւորումներու,
ինչպէս նաեւ այլ նիւթերու: Ձանոնք կը կար-
դան, վստահ եմ, շատ ուրիշներ եւս: Բոլորին
սրտէն կը խօսի ան: Աստուած համբերութիւն
տայ իրեն: Երբեմն կը մտածեմ, քե ինչպէ՛ս
կարուածահար չ'ըլլար այս բոլորը գրելու առ-
թիւ: հաւանաբար Աստուած իմ աղօթքներս կը
յսէ ու կը խնայէ իրեն: Այդ նամբուն վրայ ես
այլ շատ կ'օջշեցում անգամ եմ ու համը գի-
տեմ: Շունչը անսպառ ու գրիչը դալար:

Այս նամակովս կ'ուզեմ անդրադառնալ յօդ-
ուածագիրին մէկ անգիշղ հաստատումին, գոր-
կատարած է երկու անգամ, առաջինին բուս-
կանը չեմ յիշեր, երկրորդը՝ «Ազգակ»ի 30 յու-
լիսի թիւով: Յ. Պալեան այնպէս կը կարծէ, քե
ձեռքերին, յօդուածին, թերթինը կառոյցնե-
րը բրբերեցի ազդեցութեամբ մտած են հայե-
րեկի մէջ. ան կ'ակնարկէ յատկապէս այս կա-
ռոյցներուն մէջ մտնող Ն մասնիկին: Թրքերե-
նը ստացականութիւն կազմող այս մասնիկը
չունի. երբ յօդուածագիրը փորձէ օրինակներ
բերել, - ինչ որ չէ ըրած, - ինք ես պիտի անդ-
րադառնար այս իրողութեան: **Ձեռքերին, յօդ-
ուածին, թերթինը** մարտը հայերէն են, հայ-
կական մտածողութեան ու հայկական միջա-
վայրի մէջ ծնունդ առած կառոյցներ, որոնք
ոչինչով հարկատու են թերթերէնին: Աւանդա-
կանօրէն փոխանցուած սխալ տպաւորութեան
մը հետեւանքով կը փորձուի ասոնց հայկակա-
նութիւնը կասկածի ենթարկել, եւ այդ տպաւո-
րութիւնը փոխանցողները անպայման ընտիր
հայագետներ չէին: Այս հաստատելու համար
յիմենք աշխարհաբարի բուրմին՝ հայր Արևել
Այտրնեան:

Այտրնեան, ցոյց տալէ ետք ստացականու-
թեան արտայայտութեան սովորական իմ, քու,
եր, մեր, ձեր, իրենց միջոցները, կ'աւելցնէ
«Մտտ անգամ առանց դերանուան ալ միմեկ
ստացական յօդերով գոյականը կը հոլովուի եւ
նոյն գորութիւնը կ'ունենայ» (քնն. քեր., էջ
46). եւ կը բերէ հետեւեալ օրինակները՝ **պար-
տէզնիս, պարտէզնիդ, պարտէզնիս.** նոյնիսկ
ստացական հոլովուած ձեւերը՝ **պարտէզնիս, պար-
տէզնուս, պարտէզնիս ...:** Անշուշտ գրողը
ազատ է նախընտրելու **մեր պարտէզը, մեր
պարտէզին** ձեւերը, բայց եւ այնպէս միւսները
նախերէն ըլլալէ չեն դադրիր: Հաւանաբար բա-
նեհնուրի անտիկնայ յանձնարարելի ըլլար
սուսափել ասոնց յոգնակի ձեւերէն՝ **պարտէզ-
երնիս, պարտէզներնուս, պարտէզներնիս** եւ
յլն. եւ ճիշդ այն վերջին թելադրանքն ալ սո-

վորաբար կը տրուի դպրոցականներուն:
Ի դէպ, այսպիսիներուն մէջ դերակատարը
չ հնչիւնը չէ, այլ **Ն** մասնիկը, որ շատ հինէն
կու գայ եւ անցեալին սովորական յոգնակերտ
մասնիկ մըն էր ան. ուրեմն՝ **պարտէզնիս** բառը
կը ստուգաբանուի սա ձեւով՝ **պարտէզնիս:**
Այսպէս, բաժնելով հանդերձ Յ. Պալեանի
տաղանտները, կ'ենթադրեմ, քե լեզուական
մաքրութիւնը նման չափազանցութիւններու
պետք չէ հասցնել: Ինչ կը վերաբերի **թերթի-
նը, սեղանինը, տունինը** կառոյցներուն, ասոնք
հարիւր տոկոսով հայերէն են եւ հազիւ քե կա-
րելի ըլլայ գանոնք փոխարինել. օրինակ՝ «Այս
բանկոնը նմարկուած է, տունինը աւելի կոկիկ
է». ինչո՞ւ մի այս նախադասութեան **տունինը** կա-
ռոյցը խորք է կամ քե ինչո՞ւ է ինչպէ՛ս փո-
խարինել գայն:

Այսպիսի ծայրայեղ միջամտութիւններով
արեւմտահայերս «յաջողած» ենք ձեռքէ հանել
կարգ մը այլ տարրեր եւս, ինչ որ լեզուական
նիշդ քաղաքականութիւն մը չէ:

Ասոնցմէ բուն՝ **Ն** մասնիկը **գասնէ, քսե-
նէ, երգանինը, տունինը** կառոյցներն է հաստա-
տողը. «Ոմանց՝ այս մասնիկին յոժոռ նայե-
լուն պատճառն է անտարախոյս, որ տանիկ կը
համարին. բայց չէ քե միայն օտար չէ, այլ բա-
ւական հին է հայերէն լեզուի մէջ եւ որպէս
ամենահին» (անդ. 99): Այս մասնիկը, որ այն-
քան ճիշդութիւն ու առուգութիւն կու տայ
մեր խօսքին, այնքան հալածուեցաւ հայոց լե-
զու մագիստրոսներուն կողմէ, որ կարելի է ըսել,
քե այսօր ան դուրս է ինկած առնուազն գրական

հայերէնէն. աւելցնենք՝ անարդարօրէն:
Բաղդատել՝ Տասնէ կու գամ:
Երբ որ տաս, կու գամ:
Երբ որ տաս, կու գամ:
Որքան առոյգ է առաջինը, ու որքան բոյլ են
միւսները:
Կը հասնիմ **ԿՈՐ**-ին, որ նոյնպէս հալածա-
կան մըն է եւ որուն բացը այնքան զգալի է.
արեւմտահայերէնը, բաղդատած արեւելահա-
յերէնի **գնուած եմ** կամ անգլերէնի I am going
ձեւերուն, չի յաջողիր արտայայտել այնպիսի
գործողութիւններ. որոնք ընթացքի մէջ են, կը
շարունակուին ու չեն հասած իրենց աւարտին:
Գնուած եմ եւ **կ'երթամ** նոյն բաները չեն. միայն
կ'երթամ կոր ձեւը ճիշդ կը համապատասխանէ
առաջինին:

Եզրակացութիւնը:
Պարզ է. լեզուն մարքելու ճիգին մէջ պետք
չէ դիմել չափազանցութիւններու, այլ կառչել
յստակ առաջնահերթութիւններու: Արդի արե-
ւելահայերէնը, որուն շատ յաճախ կ'ակնարկէ
Յ. Պալեանը, - եւ ոչ միայն արեւելահայերէնը,
- կրժող որդե օտար բառերու անբացատրելի ու
անըմբռնելի հեղեղն է: Ինչպէ՛ս չեն ամչնար
ու ի՞նչ են սովալայաբան օտար բառ կը գործա-
ծեն այս մարքիկ. ո՞վ պիտի բռնէ անոնց ձեռ-
քերը. բռնել ըսի, օ, ոչ, այդ ձեռքերը
բռնելու արժանի չեն. կ'ուզէի ըսել՝ ո՞վ պի-
տի կտրէ այդ ձեռքերը: Աչքը չէ՛ ս սիրեր Ստա-
լինին, որ քանի մը օտար բառ ընդամենը պար-
տադրած էր, ու այդ սահմաններուն մէջ ալ կը
մնային այն ստեղծ: Իսկ հիմա՝ **կոյնյոնկտուր,**

կորուճարացնել, կելտորատ եւ հարիւրաւոր ու
հագարաւոր նման հրեշտութիւններ, որոնց մէկ
նոյն հաւաքածոն կը գտնէր, ի շարս այլոց, «եր-
կիր» բերքի մէջ, որ հայերէնը յօշոտողներու
կարգին կը գտնուի յառաջապահ դիրքերու
վրայ: Կարծես տասնամեակներով ի պահ
դրուած էին՝ մաֆիան, կաշառակերութիւնը,
փտածուրիւնը, մարմնավաճառութիւնը,
տնտեսական տագնապը, գաղբը եւ այլն, եւ ան-
կախութիւնը լոյս աշխարհ հանց այս աստե-
րը հասկանք կամ կը փորձենք հասկնալ: Սա-
կայն բնագոյական ո՞ր միջոցով բացատրել լեզ-
ւական այս սկրքուածութիւնը, որ համատարած
երեւոյթ դարձած է անկախ Հայաստանի տա-
րածքին եւ որուն դեմ ոչ իսկ պայքար կը
մղուի. կը մեղանչեն բոլորը, անսանձելի մո-
լոցքով մը ու կիրքով մը, որուն դեմ ոչ մէկ
բուժք կը գորուի եւ որուն անգոր ակնատես-
ներն ենք:

Ահա այս ահաւոր ու աննախընթաց չարիքն
է, որ առայժմ պետք է դարմանուի: Յանկալի
արդիւնքի մը հասնելու համար տնտեսական
մեծ միջոցներ անհրաժեշտ չեն. ազգային ու
մտաւորական տարրական պարկէշտութիւնը
բաւարար է: Պետք է օգտագործել բոլոր լծակ-
ները՝ քաղաքական, տնտեսական, ընկերային,
կուսակցական, բարեսիրական եւ այլ, ու փոր-
ձել հասկնել առ ուր անկ է, քե հանդուրձելի
սահմանները շատոնց անցած են ու կարելի չէ
այսպէս շարունակել:

ՏՈՔԹ. ԱՐՄԵՆԱԿ ԵՂՎԱՅԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Շարունակուած՝ 4րդ էջէն

ԻՐԲԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՅՈՒՇԱԿՈՒԹՈՂ ԸՇԿՈՒԿՆԵՐ ԵՍ. ԹԱՂԷՒ ՎԱՆՔԻ ՇՐՋԱՓՈՎԻ ՏԱՐԱԾՔԸ

Իրանի Մշակութային Ժառանգութեան պահ-
պանման կազմակերպութեան կողմէ Ս. Թա-
ղէս առաքելի վանքի շրջափակին տարածքը
եւ պահպանման կարգավիճակը ճշդորոշուեցան:
Յայտնենք, թէ Ս. Թաղէի վանքը կը գտնուի
Իրանի արեւմտեան Ատրպատական նահանգի
Չարտրան դաշտավայրի հիւսիս-արեւելքը:

Հստ Մշակութային Ժառանգութեան պահ-
պանման կազմակերպութեան տեղեկատու կեդ-
րոնի հաղորդման, այդ պատմական յուշակոթո-
ղի կառուցին եւ շրջափակին ընդհանուր կամ
մասնակի նորոգման եւ պահպանման նպատա-
կով կատարուելիք որեւէ գործողութիւն պէտք
է ենթակայ ըլլայ յիշեալ կազմակերպութեան
կողմէ տրուելիք որոշման եւ արտօնութեան:

Ս. Թաղէի վանքը կառուցուած է բրիտո-
նէական տարածման կանուխ ժամանակաշը-
ջանին:

Վանքի ներկայ կառույցը բաղկացած է երկու՝
հին եւ նոր մասերէ: Հին մասը կառուցուած է
սեւ քարերէ, 1300ական թուականներուն, իսկ
նոր բաժինը՝ 1800ական թուականներուն, պար-

սից գահաժառանգ Արքայ Սիրգայի օրով:

ԵՐԵՒԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՐԱՄԱՍԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ ԿԸ ՀԱՄԱՐՈՒԻՆ

Երեւանի պատմութեան թանգարանին մէջ
ներկայիս պահուող շուրջ 87 հազար պատմա-
կան-մշակութային արժէք ներկայացնող իրերը
վերջերս համարուեցան քանի մը նոր արժէքնե-
րով:

Թանգարանի շուրջ 5000 դրամային արժե-
թուղթեր պարունակող դրամագիտութեան բա-
ժինը համարուած է 8 դրամային արժեթուղթե-
րով, գործ թանգարանին նուիրած է Հայաստա-
նի Կեդրոնական Դրամատուրը: Թանգարանի
շուրջ 7000 նմուշ պարունակող արտադրական
բաժինին նոր քոնեքստեր տրամադրած է Երե-
ւանի քոնեքստի գործարանը:

Յայտնենք, որ թանգարանը բաղկացած է 8
բաժիններէ՝ հնագիտութեան, ազգագրութեան,
կերպարուեստի, նկարչական եւ շարժապատկե-
րի աղբիւրներու, դրամային աղբիւրներու դրամա-
գիտութեան արտադրական եւ յատուկ իրենց
խումբերով:

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ

ՍԻՐՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԳՈՒԿՆԵՐ 800 ԿՐԱՄՆՈՅ ՆՈՐԱԾԻՆԻ ՎԻՃԱԿԸ ԿԱՅՈՒՆ Է

Ընթացիկ տարւան Յունիսին սիրտի թերի
աշխատանքի պատճառով գործողութեան են-
թարկուած 800 կրամ կշռող նորածին երեխայի
վիճակը ներկայիս կայուն է: Այդ մասին տեղե-
կացուց Մօր եւ մանկան առողջութեան պահ-
պանման գիտահետազոտական հիմնարկի առ-
քէն Գէորգի Օկոյեւ:

Նշենք, որ երեխան գործողութեան ենթար-
կած են Նորթ-Մարաշ բժշկական կեդրոնի փոր-
ձառու բժիշկները՝ Մօր եւ մանկան առողջու-
թեան պահպանման գիտահետազոտական հիմ-
նարկի փորձառու բժիշկներուն հսկողութեան
տակ: Գործողութեան հետք երեխային բժշկա-
կան խնամքը կը կատարեն գիտահետազոտական
կեդրոնի բժիշկները: Որեւէ բժիշկ միշտ րան մը
կ'ունենայ հպարտանալու: Ատիկա ներքին զգա-
ցողութիւն մըն է, որ ուրիշ մը կրնայ չհասնիւր:
Իսկ մեր բժշկութիւնը այսօր հպարտանալու
առիթներ ունի, ըսաւ Գ. Օկոյեւ:

ՄԵԾ ԻՐԱԳՐԱՐՁՈՒԹԵԱՆ

BIG SALE

STORES

ՉԵՏԵԷԹԷ

BIG SALE

ՊՈՒՐՔ ՀԱՍՈՒՏ

5000 ՄԵԹՐ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ



ԹԻ ՇԼՐԹ
2.000 Լ.Ո.



ԹԻ ՇԼՐԹ
7.000 Լ.Ո.



ՆԱԳՈՒՍ
2.000 Լ.Ո.



ԹԻ ՇԼՐԹ
6.000 Լ.Ո.



ՆԱԳՈՒՍ
8.000 Լ.Ո.



- ՏԱԲԱՏ 5.000 Լ.Ո.
- ԱՆԹԻ ՊՈՒՐՁ 2.000 Լ.Ո.



- ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԶԵՒԻ
ԹԻ ՇԼՐԹ 10.000 Լ.Ո.
- ԳԼԽԱՐԿ 2.000 Լ.Ո.



ՇԱՊԻԿ
10.000 Լ.Ո.



ԹԻ ՇԼՐԹ
10.000 Լ.Ո.



ԹԻ ՇԼՐԹ
5.000 Լ.Ո.



ՍԱՆՏԱՎ
4.000 Լ.Ո.



ԿՕՇԻԿ
4.000 Լ.Ո.



ԼՈՂԱԶԳԵՍ
9.000 Լ.Ո.

BIG SALE BRANCHES

- * **ՀԱՍՐԱ**
ՄԻՆԵՄԱ
ՓԻՔՍԵՂԼԻԻ ԿԻՅ
☎ 01 / 343343
- * **ՆԱՊԱԹԻԷԻ**
ՀՐԱՊԱՐԱԿ
☎ 03 / 949796
- * **ՊԸՐԺ**
ՊԱՐԱԺՆԷ
☎ 03 / 678501
- * **ԱՆԹԻԼԻԱՍ**
ՄԵՆԹՐ St. Elie
☎ 03 / 814161
- * **ՄԱՐ ԷԼԻԱՍ**
CLASS ՎԱՃԱՍԱՍՆԻ ԿԻՅ
☎ 03 / 602554
- * **ՅԸՐՆ ԷԼ**
ՇԸՊԷՔ
ՄԻՆԵՄԱ ՍՔԱՍԱ
☎ 01 / 294090

Ռուսագիրական

ՆՆԱԴԱՐԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄՇԱԿՈՅԹԸ

ՇՈՒՐՁ 800 ՏԱՐԻ ԱՈԱՋ ՀԱՐԱՒԱՐԵՄՍԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՆԻԿՆԵՐԸ ՍԿԱԾ ԵՆ ԷԱՐԵ ՄԻՋՆԱԲԵՐՈՆԵՐ ԵՒ ԲԱՐՁՐԱԲԵՐՁ ԳԻՒՂԵՐ ԿԱՌՈՒՑԵԼ: ՈՐՄԵ՞ ԿԸ ԿԱՆԱՅԻՆ ԱՆՈՒՑ: «ՈՒՈԼՈ ՏԻՋՆԻ»Ի ԿՈՂՄԵ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԾ ՅՕՐՈՒՄԾ ՄԸ ԿԸ ԲԱՅԱՏՐԵ, ԹԵ ԱՆՅԵԱԼԻ ՃԵՍԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԵՆ ԽՈՒՍԱՓԻԼԸ ԿՏԱՆՁԱՒՈՐ Է, ԵՒ ԹԵ՛ ԱՆԵՐԱԾԵՑ Է ԴԻՍԱԳՐԱԿԵԼ ՉԱՆՈՒՑ

Հաւանաբար արչաւողնները քնացած գիւղին վրայ յարձակած են արեւածագին: Բազմաթիւ գինուորներ անապատային սառն օդին մէջ ծագող արեւուն նման անձայն մագլցեցան բազմաթիւ եւ խիտ բնակարաններուն տափարակ երդիքները: Գիւղին 150 սենեակները ոչ պատուհան ունէին ոչ ալ դռներ, որոնք կը բացուէին գետնայարկին վրայ: Երդիքին մէջ կար ծակ մը եւ անոր յենած աստիճան մը, որ իւրաքանչիւր բնակարանի միակ մուտքն էր ու ելքը: Արչաւող գինուորները անմիջապէս դուրս քաշեցին աստիճանները, թակարդի մէջ ձգելով բնակիչները: Ապա անոնք վառեցին հնդկական հաղարջի իւրտուր ու գիւրավառ ճիւղեր եւ բոցավառ ծրարները նետեցին սենեակներուն մէջ: Զինուորները հետզհետէ ուռճացող կրակին վրայ նոր փայտաւեցուցին: Ոմանք գիւղին պատերուն վրայ չորցող կարմիր կծու պղպեղի տրցակները քաշեցին եւ նետեցին դժոխային կրակին մէջ, ստեղծելով ծուխ մը, որ արցունքաբեր կազի նման կ'այրէր աչքերը: Շուտով բոցերը հասան երդիքներուն գերաններուն, եւ յարձակողները պէտք էր տանիքներէն ցատկէին նախքան անոնց փուլ գալը: Գիւղին տարածքին բոլոր երդիքները փուլ կու գային բնակարաններուն մէջ, լուռութեան մատնելով ներսէն լուռող ճիւղերը:



Սալւմը Ռուսիոյ Ամերիկայի բնիկներուն խիտ սենեակները բաղկացած գիւղերն էր: Շատեր կը ժխտեն, թէ արիւնակի պատերազմ մը մղուած է այստեղ:

գործ ենք իրբեւ օրինակ եւ գաղափարներու փորձադաշտ: Սակայն իրականութեան մէջ այս վայրը եղակի չէ, նոյնիսկ այնքան ալ արիւնակի վայր մը չէ, տարբեր չէ աշխարհի մէջ որեւէ այլ վայրէ: Երբ առաջին անգամ ըլլալով սկսեց աւսուսմանսիրել շրջանը, հարց տուի, թէ արդեօք պատերազմներ կը մղուէին նախապատմական մշակութիւններու միջեւ: Անշուշտ այժմ եզրակացուցած մըն է: Բուն հարցումը, զոր պէտք է հարցունք ունէ հնագէտ, հետեւեալն է. արդեօք երբեւիցէ խաղաղութիւն գոյութիւն ունեցած է»:

ԼԱՅՆԱՏԱՐԱԾ ԱՂԵՏ

Լըպլան 29 տարեկան օգնական դասախօս մըն էր 1972ին, երբ Ամերիկայի Գիտութեան Ազգային Հիմնարկէն նիւթական նպատակ ստացաւ, ուսուսմանսիրելու համար Նիւ Մեքսիքոյի կեդրոնական էլ Սօրո հովիտին աւերակները: Ընդարձակ դաշտերով և կոնարբեր ծառերով գեղեցիկ հովիտ մըն էր անիկա: Սակայն ծովուն մակերեսէն 720 մետր բարձրութեան վրայ ցուրտ գիւղերներն ու հարմարեղէն անձրեւները երկարատեւութեան յարմար վայր մը չէին ընձեռել: Այսուհանդերձ, 13րդ դարու կելքաւորութեան, այս հովիտը բնակավայրն էր Նիւ Մեքսիքոյի ամէնէն բազմամարդ հաւաքականութիւններուն: Կարգ մը գիւղեր կը բաղկանային աւելի քան 1000 սենեակներէ: Շատեր հարիւրաւոր սենեակներ ունէին:

«Այս մարդիկը ի՛նչ կ'ընէին ծովուն մակերեսէն 720 մետր բարձրութեան վրայ. նման աննրբատար պայմաններու մէջ եզրկատարներին մշակելու կը փորձէին դառնալ,- կ'ըսէ Լըպլան:- Այս հարցումին մասին կը մտածէինք եւ վայրը պեղելու համար դիմումներ գրեցինք ներկայացուցինք Ամերիկայի Գիտութեան Ազգային Հիմնարկին, առաջն ակնարկներու պատերազմի որեւէ հաւանականութեան»:

Իսկ ինչ որ անոնք յայտնաբերած են վայրէն, ծնունդ տուած է հետաքրքրական այլ հարցումներու:

«Էլ Սօրոյի մէջ մեր ուսումնասիրութիւններուն երկրորդ օրը քաղցինք գիւղին տարածքին եւ ամէն կողմ այրուածքի հետքեր տեսանք: Հետեւաբար սկսանք պեղել: Յայտնաբերեցինք այսպիսի սենեակներ», կ'ըսէ ան, մատնացոյց ընելով սենեակի մը լուսանկարը: Կաւէ իրերու բեկորներ թափած էին գետինը. անոնք հաւանաբար կոտորուած էին, երբ տանիքի գերանները փուլ եկած էին հրդեհի պատճառով:

«Յայտնապէս մարդիկ հապեցուցող դուրս վազած են դռնէն,- կը բացատրէ Լըպլան:- Ամէն ինչ գետինի վրայ մնացած էր, այնպէս ինչպէս փախչողները ձգած էին զանոնք: Այս վայրը կ'ընչգործէր իրարմէ անջատ 20 փոքր գիւղեր, իւրաքանչիւրը՝ 5, 10 եւ 30 սենեակներով, որոնք կը տարածուէին երկար գոտիի մը վրայ, եւ բոլորն ալ աղէտալի կերպով հրկիւզուած էին»:

Նման քառաշէն գիւղերու մէջ բնական հրդեհներ չուտով կը մարին կամ բնակիչները անմիջապէս կը մարեն զանոնք, նախքան սենեակի մը այրիլը: Ամբողջ գիւղի մը հրկիւզումը պատերազմի արդիւնք պէտք է եղած ըլլայ, եզրակացուցած է Լըպլանի խումբը:

Լըպլան եւ անոր աշխատանքային խմբակը նաեւ նկատած էին, թէ իրենց յայտնաբերած պատերէն կը պակսէին բազմաթիւ մեծ քարեր: Ասիկա առեղծուած մը մնացած է մասնագէտներու համար, մինչեւ որ անոնք քանի մը հարիւր մետր հեռու յայտնաբերած են աւելի մեծ գիւղ մը, որ կը բաղկանար 500 սենեակներէ եւ կը շրջապատէր կեդրոնական հրապարակ մը: Անոր շինութեան թիւրքերու արարողը ճշգրտ գնահատութիւններէ ի յայտ եկած է, թէ շրջապատի աւելի փոքր գիւղերը հրկիւզուած էին 1276ին:

«Կը կարծեմ, թէ վերապրողները քանդած են այդ փոքր եւ ջրուած գիւղերը, զորս պաշտպանելու կարելի չէր, եւ հիմնականին մէջ կառուցած են ամրոց մը, կ'ըսէ Լըպլան:- Այս մարդիկը շատ կը վախնային բանէ մը: Սկիզբը կը կարծէին, թէ պատճառը շատ տեղական եւ պատահական

բան մըն էր, որուն կարելի չէր աւելի լայն բացատրութիւն մը տալը»:

Միայն վերջին քանի մը տարիներուն է, որ Լըպլան սկսած է հաւատալ, թէ էլ Սօրոյի պատմութիւնը միայն դրուագ մըն է 13րդ դարու վերջաւորութեան Ամերիկայի հարաւարեւմուտքը եւ հաւանաբար գրեթէ ամբողջ Հիւսիսային Ամերիկան հարուածած վայրագ ժամանակներէն: Լայնատարած աղէտի մը ապացոյցները բազմաթիւ են, կ'ըսէ ան: Անոնք կը տարածուին այժմու Նիւ Եորքի տարածքին իրաքուս ցեղախումբին ցանկապատի մէջ առնուած գիւղերէն մինչեւ իտաղականի հիւսարեւմտեան ամբարկու բնակավայրերը:

«25 տարի տեւեց, մինչեւ որ հասկնամ, թէ ճիշդ ի՛նչ պատահած է», կ'ըսէ Լըպլան:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՇՏԱՐԱԿՆԵՐ ԵՒ ՈՋ ՈՔԻ ԳՕՏԻՆԵՐ

Լըպլան դիւրութեամբ կաւէ իրերու բեկորներ կը գտնէ հոն, ուր անօգնական լրագրող մը միայն ցարկներ եւ խիճեր կը տեսնէ: Ան կը գար մասնա, թէ ինչո՞ւ աշխարհը չի հասկնար իր վիճարկութեան բացառաւոր ճշմարտութիւնը: Եուրթա՛հ եւ Քոլորատոյի սահմանին վրայ 7 դար առաջ լքուած աւերակներուն քովէն քալելով՝ ան կը պոռայ.

«Ինչո՞ւ այսպէս ըրիք»: Ան ոչ թէ կը սաստի յամառ պաշտօնակիցներ, այլ խօսքը կ'ուղղէ վաղուց անհետացած այն մարդոց, որոնք վիթխարի քարէ աշտարակներ կառուցած են ապառաժներու եւ նեղ դաղաթիւներու վրայ: Ինչո՞ւ Հովընուիփի իրենց ժամանակակիցներուն նման պիտի ուզէին ապրիլ ամէնէն անմատչելի վայրերուն մէջ, զորս կարելի էր գտնել: Ինչո՞ւ ունէ մէկը պիտի ուզէր կայք հաստատել հոն, ուր ջուրը քիչ է, եւ կլիզի արեւը կանաչամալուէ մարդիկը:

«Մարդիկ փորձած են գիտնալ այս աշտարակներուն ծագումը: Ոմանք կարծած են, թէ անոնք շտեմարաններ են, ուրիշներ՝ աստղադիտարաններ: Անոնք կառուցուած են ճիշդ այն ժամանակներուն, երբ էլ Սօրոյի ամրոցը բարձր



Էլ Սօրոյի ժայռերը. «25 տարի տեւեց, մինչեւ որ հասկնամ, թէ ճիշդ ի՛նչ պատահած է», կ'ըսէ հմազտ Լըպլան, ակնարկելով այս ժայռերուն շուրջ հրկիւզուած բնակավայրերուն:

րացած է: Աշտարակները կը պաշտպանէին ձորը ճիշդ այնտեղ, ուր ջուրը կը հոսէր ժայռերէն: Անոնք պատահականօրէն կառուցուած չեն, այլ տեղադրուած են խումբերով, զիրար պաշտպանելու համար» կ'ըսէ Լըպլան:

Հովընուիփը այն վայրերէն էր, որ Լըպլանին մղած է վերատեսութեան ենթարկելու էլ Սօրոյի մէջ այրած գիւղին ճակատադիմին պատմութիւնը: Աւելի քան 20 տարի հոն աշխատելէ մտած հնագիտական տարբեր զբաղումներ ունեցած է եւ սատարած է Ամերիկայի հարաւարեւմտեան շրջաններուն հնագիտական գանձերուն պահպանութեան: «Հարաւարեւմուտքի մէջ կը շրջէի 5էն 6 տարի առաջ, երբ սկսայ տեսնել նոյն կրկնուող պատկերը. լքուած գիւղեր, ամրոցներու կառուցում, մեծ հրդեհներ, եւ մտածեցի, որ հաւանաբար սխալ կերպով բացատրած էի էլ Սօրոյի ղէպերը,- կ'ըսէ Լըպլան:- Թերեւս ստիկա ամբողջ հարաւարեւմուտքին յատուկ երեւոյթ մըն էր»: Բախտներուն տարողութիւնը շատ աւելի մեծ էր, քան ինչ որ Լըպլան կ'երեւակայէր:

«Ամբողջ հարաւարեւմուտքի տարածքին 1200ական տարիներէն սկսեալ ամրոցներ կը կառուցուէին: 1275ին կամ 1300ին (տեղի համաձայն) ամէն ոք կը բնակէր պաշտպանուած բնակավայրի մը մէջ»:

Լըպլանի կողմէ կատարուած ուսումնասիրութիւնն մը ցոյց տուած է, թէ 13րդ դարու վերջերուն իւրաքանչիւր գիւղ կամ գիւղերու խումբ շրջապատուած էր ոչ ոքի գոտիներով, ինչպէս այն մահաշունչ հողամասերը, որոնք իրարմէ կը բաժնէին Ա. Աշխարհամարտի խրամները: Մարտիկ փոքր եւ մեկուսացած գիւղերը լքած են, աւելի մեծ եւ ամբարկու բնակավայրերու մէջ հաստատուելու համար, ինչ որ պատճառ դարձած է հսկայական տարածքներու ամայացումին: Լըպլանի համաձայն, լքուած տարածքները պաշտպանական գոտիներու վերածուած են

իրարու թշնամի գիւղերու միջեւ, եւ կարելի չէր կտրել զանոնք, այնքան որ վտանգաւոր էին:

ՄԱՐԴԻԿ ԿԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՆԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ ՏԻՐԱՆԱԼՈՒ ՀՄԱՐ

Այս բոլոր արիւնահեղութեան պատճառը, ինչպէս կը հաւատայ Լըպլան, սառուցեալ ժամանակաշրջանի մը սկիզբն էր, երբ երկրագունդը սկսաւ սառիլ, սովի մատնելով Եւրոպան: Սառուցեալ այս փոքր ժամանակաշրջանը յաջորդեց 300 տարուան բարենպաստ կլիմայի մը, որ ծանօթ է իրբեւ Միջնադարու Զբոմ ժամանակաշրջանին: 900ական տարիներուն երկրագունդին ջերմացումը փարատեց Ամերիկայի հարաւարեւմտեան շրջաններուն խիտ չորութիւնը եւ յաւելեալ անձրեւներ բերաւ: Հունձքը աւելցաւ, հետեւաբար նաեւ մարդկային բնակչութեան թիւը, կ'ըսէ Լըպլան: Անասաղիներու գիւղական խորհրդաւոր եւ զարգացած մշակութիւնը ծաղկեցաւ Նիւ Մեքսիքոյի հիւսիսարեւմտեան Չաքոյի ձորին մէջ: Անոնք կառուցեցին բազմաթիւ բնակարաններ եւ ճամբաներու ցանց մը, որ կը կտրէր Նիւ Մեքսիքոյի, Արիզոնայի, Քոլորատոյի եւ Եուրթա՛հի տարածքը: Ասիկա համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան մըն էր, կ'ըսէ Լըպլան: Պատերազմի սակաւաթիւ ապացոյցներ կան 900էն 1200ական տարիներէն: Մարդոց մեծամասնութիւնը կը բնակէր անպաշտպան բնակավայրերու մէջ, հովիտներու երկայնքին, արտերու եւ ջուրի աղբիւրներու մօտ:

«Միջնադարու Զբոմ ժամանակաշրջանը հրաշալի էր եզրկատարներին մշակութեան համար: Անիկա լաւ ժամանակ մըն էր նաեւ Եւրոպայի մէջ ցորենի մշակութեան համար,- կ'ըսէ Լըպլան:- Այդ ժամանակ էր, որ եւրոպացիք սկսան կառուցել իրենց գոթական մայր եկեղեցիները: Զաքոյի ձորին բնակավայրերը կառուցուած են ճիշդ այն ժամանակ, երբ եւրոպացիք կը բարձրացնէին իրենց գոթական եկեղեցիները: Ասիկա լաւ ժամանակ մըն էր բոլորին համար. ուտելիքը արտաւ էր, եւ պատերազմները նուազեցան»:

Սակայն Զբոմ ժամանակաշրջանը վերջ գտաւ եւ սկիզբ առաւ Սառուցի ֆոքը ժամանակաշրջանը: Անիկա իր գագաթնակէտին հասաւ 1500ական տարիներուն: Այդ ժամանակներուն էր, որ սառցալեռերը անջատուեցան Ալպեան լեռներէն եւ քանդեցին գիւղերը: Սակայն 1317ին մարդիկ արդէն կը մեռնէին Անգլիոյ մէջ, որովհետեւ հունձքը չէր հասունցած: Այս թուականը շատ մօտ է այն թուականներուն, երբ պատերազմներ սկսած են մղուելի Ամերիկայի հարաւարեւմտեան շրջաններուն մէջ: Ուրեմն ի՛նչ պատահած էր. ընակչութիւնը մեծապէս ուռճացած էր: Պայմանները գէշ էին, բնական աղբիւրները անբաւարար էին, մարդիկ սկսան մրցիլ, եւ գոյատեւեցին անոնք, որոնք ամէնէն լաւ կազմակերպուած էին: Ասիկա աւանդական պարբերաշրջան մըն է, որ տեղի կ'ունենայ աշխարհի տարածքին որեւէ տեղ»:

Լըպլանի համաձայն, 1300էն առաջ առնուազն 20 անջատ դաշինքներ կնքուած են Նիւ Մեքսիքոյի, արեւելեան Արիզոնայի եւ Քոլորատոյի հարաւային շրջաններու գիւղերուն միջեւ: Այսօր, եթէ զանց առնենք Ռիօ Կրանտի քանի մը գիւղեր, ժայն չորս ցեղախումբերու բնակավայրերը գոյատեւած են. Արիզոնայի հովիտներուն եւ հիւսիսային Նիւ Մեքսիքոյի գիւղի, լաւ կուսաւ եւ աքում ցեղախումբերուն գիւղերը: Միւսները բնաջնջուած են պատերազմներու ընթացքին, իսկ վերապրողները ձուլուած են այլ ցեղախումբերու մէջ:


«Պատերազմներու հիմնական եւ բուն պատճառը բնական հազուադիւր աղբիւրներու տիրանալն է,- կ'ըսէ Լըպլան:- Պատերազմի նպատակը առնականութիւն փաստելը չէ, դիրքի նուաճումը չէ, արեան ծինական ծարաւը չէ: Կը պատերազմիս գոյատեւելու համար, որովհետեւ միշտ աւելի մեծ թիւով մարդիկ կան, քան՝ բնական աղբիւրները: Եւ խաղաղութիւն կը տիրէ միայն այն ժամանակներուն, երբ բնական աղբիւրներու առատութիւն կայ»:

Դիւրին է հանդիպիլ Լըպլանի տեսակէտները քննադատողի մը. պարզապէս կապ հաստատեցէք Արիզոնայի համալսարանին հնագէտներէն ձէֆ Տիմի հետ, որ կ'ուսումնասիրէ անասաղիներու բնակավայրերուն փոփոխութիւնները: Ան կը հաւատայ, թէ պատերազմը կարեւոր դեր չէ խաղացած Ամերիկայի հարաւարեւմտեան շրջաններուն մէջ, նախքան եւրոպացիներուն գալուստը: «Բանականը, որոնք վեր վար կ'արշաւէին եւ զիրա՞ր կը կոտորէին: Նման բաներ տեղի չեն ունեցած,- կ'ըսէ ան:- Արչաւանքներ տեղի կ'ունենան ինչից, ուտելիք եւ աւար վերցնելու համար: Սակայն կարելի՞ է պատերազմ կոչել զանոնք»:

Շարլ' Էջ 8

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒՂՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



ԵԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՂՏԱՍԻ Հ.Մ.Ը.Մ.Ի

ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի՝ Յուլիս 27ի կէսօրէ ետք ժամը 5:30ին տեղի ունեցաւ Պաղտասի Հ.Մ.Ը.Մ.ի նոր վարչութեան ընտրութիւնը: Յետ երկրի վարչակարգի փոփոխութեան, նորոգ նշանակուած ժամանակաւոր Ողիմպիական կոմիտէի բոլոր մարզական ակումբներէն պահանջած էր ընտրութիւններ կազմակերպել, ընտրելու վարչութեան նոր կազմեր, նկատի ունենալով, որ գրեթէ բոլոր մարզական ակումբներու վարչութեանց անդամները մեծամասնութեամբ Պասս Կուսակցութեան անդամներ են: Ի հարկէ բացառութիւն կը կազմէր Հ.Մ.Ը.Մ.ը, որուն վերջին վարչութեան կազմին մէջ ոչ մէկ անհատ կար Պասս Կուսակցութեան, թէ՛ն պէտք է ըսել, որ անցեալին ունեցեր ենք քանի մը հայ երիտասարդներ Պասս Կուսակցութեան անդամներէն, որոնք պէտք է հաստատել, որ իրենց ժամանակին խղճմտութիւն ծառայած են Հ.Մ.Ը.Մ.ին:

Ըստ Ողիմպիականի կանոնագրի սահմանումին, վարչութեան անդամներու թիւը առաւելագոյնը 11 եւ նուազագոյնը 7 անդամ պէտք է, որ բաղկանայ:

11 թեկնածուներ ներկայացած էին, որոնք բոլորը յայտարարուեցան նոր վարչութեան անդամներ եւ տեղւոյն վրայ Ողիմպիականի ներկայացուցիչները վաւերացուցին ընտրութիւնը եւ դիւանի կազմը:

Նոր վարչութեան անդամներ ընտրուեցան.

Եղբ. Պարգեւ Ասլանեան - ատենապետ
Եղբ. Վահէ Միհրանեան - փոխ ատենապետ

Եղբ. Յարութիւն Խանամիրեան - ատենապիւր

Քոյր Չուարթ Աւագեան - գանձապահ
Եղբ. Արմենակ Մկրտիչեան

Եղբ. Արամ Արամեան
Եղբ. Սարո Պողոսեան

Եղբ. Շարք-Քիչիւրեան
Եղբ. Հրայր Յակոբեան

Եղբ. Սեւան Իշխանեան
Եղբ. Խաչիկ Խաչիկեան

Հ.Մ.Ը.Մ.
ՊԱՂՏԱՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՊԱՅԵՐՆ ՄԻՒՆԻՒ ՅԱՐԹԱՆԱԿՈՎ ՍԿՍԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Գերմանիոյ ֆութպոլի ախոյեանութեան (Պուն-տարիկ) 2003 - 2004 եղանակի բացման մրցումին, որ տեղի ունեցաւ անցեալ Ուրբաթ օր, ախոյեան Պայերն Միւնիխ յաղթանակով սկսաւ եղանակը, երբ Միւնիխի Ողիմպիականի դաշտին վրայ, 63 հազար համակիրներու ներկայութեան 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Այսթրաիա Ֆրանքֆորթը:

Եղանակի առաջին կողմ նշանակեց Պայերնի պարպիցի մարզիկ Չէ Ռոպերթ (16րդ), որմէ ետք անոր խմբակիցները՝ Հասան Մալիհամիծիչ (20րդ) եւ Քլաւտիո Փիպար (42րդ) արդիւնքը բարձրացուցին երեքի: Հիւր կազմին կողմ նշանակեց ալպանացի Սքելա (68րդ):

Պայեր Լեւերքուզը բաւական լաւ ձեւով սկսաւ եղանակը, երբ 4 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆրայպուրկը (նոր Ա. դասակարգ բարձրացած): Պարպիցիներ Ռոպերթ Փոնթէ (17րդ), Լուչիո (28րդ) եւ ժուան (41րդ) նշանակեցին առաջին երեք կողմը, իսկ գերմանացի Օլիվըր Մեօվիլ չորրորդ կողմը (61րդ): Ֆրայպուրկ իր միակ կողմ նշանակեց շտրիխ Ռայթըրի (20րդ):

Պորուսիա Տորթնուս 2 - 2 արդիւնքով բախաւոր հաւասարութիւն մը արձանագրեց Շալքէի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին, երբ իր աւասարութեան կողմ (2 - 2) նշանակեց մրցումին երեքին վայրկեանին, շտրիխի պարպիցի Մարիո Ամորոսի: Նախքան այդ կողմը նորեկ Լարպիկ Յայր Քոնչէթթաօ նշանակեց իր կազմին առաջին կողմը (65րդ): 61 հազար համակիրներու ներկայութեան Համիտ Ալիթիթով նշանակեց Շալքէի երկու կողմը (39րդ եւ 58րդ):

Առաջին հանգրուանի մրցումները այդքան ալ ախտաւոր չեղան կարգ մը խումբերու համար, որովհետեւ կարգ մը մարզիկներ վիրաւորուեցան: Երթա Պերլինի պարպիցի միջնապահ Մարտինի, երկու ամիսով պիտի բացակայի դաշտերէն, ինչ եզրակացուցի յետագային՝ Հէնրի Ռամպի (Քայրալաւորներ) վեց ամիսով:

Ստորեւ՝ Ա. հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Պորուսիա Մեօնշտրալպատս - Քէօլն	1 - 0
Հաննով Ռոսթր - Շտրալպատս	0 - 2
Շալքէ - Պորուսիա Տորթնուս	2 - 2
Հերթա Պերլին - Վերտըր Պրեմեր	0 - 3
Քայրալաւորներ - 1860 Միւնիխ	0 - 1
Վոլֆսպուրկ - Պորուսիա	3 - 2
Համպուրկ - Հանովեր	0 - 3
Պայեր Լեւերքուզ - Ֆրայպուրկ	4 - 1
Պայերն Միւնիխ - Այսթրաիա Ֆրանքֆորթ	3 - 1

● ՆՇԵՆՔ, թէ Բայերնի անհաջողութիւնը 2003 - 2004 ղանակը սկսաւ - 3 կէտով, նկատի առնելով որ նիկա Գերմանիոյ ֆութպոլի ֆետերասիոնի նոյն պատժուեցաւ, անցեալ եղանակին իր կարգը մարզիկներուն ամսականները նուազելու եւ սելեկտ տուրքերէ խուսափելու համար:

ՖՈՒՏԻԼԱ 1

ԵՂՈՐԴԱՅՄԻ ԿՐԱՆ ՓՐԻՒՆ ԸԵՐՈՍԸ՝ ՄՈՆԹՈՅԱ

Ֆորմիւլա 1 2003ի աշխարհի ախոյեանութեան 12րդ կրան փրին, որ տեղի ունեցաւ երէկ՝ Հոբընհայմի մէջ (Գերմանիա), վերջ գտաւ քոլումպիացի Խուան Փապթո Մոնթոյայի յաղթանակով, որ այսպիսով այս տարուան ընթացքին իր երկրորդ յաղթանակը արձանագրեց: Ան արձանագրեց 1 ժամ 28 վայրկեան եւ 48 երկվայրկեան արդիւնք մը:



Մոնթոյա՝ իր շահած բաժակով

Նշենք, թէ Մոնթոյա եղանակի իր առաջին յաղթանակը արձանագրեց անցեալ Յունիս 1ին, երբ շահեցաւ Մոնթոյայի կրան փրին:

Ուիլիըմսի վարորդ Մոնթոյայի արձանագրած այս յաղթանակը եղաւ բաւական կարեւոր, որովհետեւ վարորդներու ընդհանուր դասաւորման մէջ ան ոչ միայն բարձրացաւ 2րդ դիրք, այլեւ առաջին դիրքը գրաւող գերմանացի Միքայել Շումախըրէն (Ֆեռարի) միայն վեց կէտով ետ կը մնայ:

Պէտք է ըսել, որ երէկուան շտապ ան-երկուսներուն կարգին էր նաեւ Շումի, որովհետեւ ան յոյս ունէր գրաւելու 2րդ դիրքը եւ բարձրանալու փոտիում: Սակայն վազքուղիին աւարտէն երեք լէփ առաջ, անոր ինքնաշարժին անիւր պատռեցաւ եւ պատճառ դարձաւ, որ ան դանդաղեցնէ իր ինքնաշարժը եւ ուղղուի դէպի փիթ - սթափ. ժամանակի կորուստը պատճառ դարձաւ, որ անոր ետին գտնուողները գերազանցեցն պայն: Այսպիսով, ան իր հայրենիքին մէջ

տեղի ունեցած կրան փրին շաշտեցաւ բարձրանալ փոտիում, որովհետեւ մրցումը աւարտեց եօթներորդ Մոնթոյայի կրան փրին:

Երէկուան կրան փրին երկրորդ դիրքը գրաւեց բրիտանացի Տէյվիտ Քոլթարտ (Մաքլարըն)՝ 1՝ 05՝ ուշացումով, իսկ երրորդ դիրքը՝ իտալացի Ետանո Յորուլի (Ռընո)՝ 1՝ 09՝ ուշացումով:

Հոբընհայմի կրան փրին ապահովեց իսկ տեղի ունեցաւ արկած մը, որուն պատճառով երեք վարորդներ՝ Ռալֆ Շումախըր, Ռուպերտ Պարիքելլո եւ Քիմի Ռայքոնըն դուրս մնացին:

Ստորեւ՝ երէկուան կրան փրին արդիւնքները.

- 1- Խուան Փապթո Մոնթոյա (Քոլումպիա) Ուիլիըմս 1 ժամ 28՝ 48՝
- 2- Տէյվիտ Քոլթարտ (Բրիտանիա) Մաքլարըն 1՝ 05՝ ուշացումով
- 3- Ետանո Յորուլի (Իտալիա) Ռընո 1՝ 09՝ ուշացումով
- 4- Ֆեռնանտո Ալոնսո (Սպանիա) Ռընո 1՝ 09՝ ուշացումով
- 5- Օլիվիէ Փանիս (Ֆրանսա) Թոյոթա 1 լէփ ուշացումով
- 6- Քրիսթիանո Տա Մաթթա (Պրաչի) Թոյոթա 1 լէփ ուշացումով
- 7- Միքայել Շումախըր (Գերմանիա) Ֆեռարի 1 լէփ ուշացումով
- 8- Ենսըն Պաթըն (Բրիտանիա) ՊԱՐ 1 լէփ ուշացումով

Ստորեւ՝ վարորդներուն ընդհանուր դասաւորումը.

	ԿԵՏ
1- Միքայել Շումախըր (Գերմանիա)	61
2- Խուան Փապթո Մոնթոյա (Քոլումպիա)	75
3- Քիմի Ռայքոնըն (Ֆրանսա)	62
4- Ռալֆ Շումախըր (Գերմանիա)	53
5- Ռուպերտ Պարիքելլո (Պրաչի)	49
6- Ֆեռնանտո Ալոնսո (Սպանիա)	44
7- Տէյվիտ Քոլթարտ (Բրիտանիա)	41
8- Ետանո Յորուլի (Իտալիա)	22
9- Ենսըն Պաթըն (Բրիտանիա)	12
10- Մաթթա Ռեպարտ (Աւստրալիա)	12

ԽՈՒՄԵՐՈՒ ԳՍՍԵՐՈՒՄ	ԿԵՏ
1- Ֆեռարի	120
2- Ուիլիըմս	118
3- Մաքլարըն	103
4- Ռընո	66
5- ՊԱՐ	15
6- Թոյոթա	14
7- Տալուար	12
8- Ճորտըն	11
9- Սաուպըր	9

ՏՈՐԹՈՒՆՏԻ ՆՈՐ ՀՈՎԱՆԱԴՐՈՐ՝ «ՆԱՅԻ»

Պորուսիա Տորթնուսի պատասխանատուները անցեալ շաբաթավերջին յայտարարեցին, թէ համաձայնութիւն մը կնքած են աներկեան «Նայի» ընկերութեան հետ, որ 2004-2005 եղանակին սկսեալ պիտի ըլլայ ակումբին հովանաւորը: Անոնց միջեւ կնքուած պայմանագրութիւնը հինգ տարուան համար է:

Նշենք, թէ 2002ին Պունտարիկայի ախոյեան հանդիսացած Տորթնուսի այժմու հովանաւորողն է գերմանական «Կոլ» ընկերութիւնը:

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒՏՊՈՒԼԻ ԱՒՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՄՈՆԱՅՈՒ ԵՒ ՄԱՐՍԵՅ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ ՍԿՍԱՆ 2003 - 2004 ԵՂԱՆԱԿԸ

Ֆրանսայի ֆութպոլի ախոյեանութեան 2003 - 2004 եղանակի բացման մրցումին, որ տեղի ունեցաւ անցեալ Ուրբաթ օր, ախոյեան Լիոն պարտութեամբ սկսաւ, երբ 1 - 0 արդիւնքով վերադարձաւ Լիոն դաշտէն: Այսպիսով, յաջորդաբար 23րդ տարին ըլլալով, Լիոն առաջին հանգրուանի մրցումներուն կը ձախողի յաղթանակ մը արձանագրել:

Լիոնի մրցումին «որ» կողմ նշանակեց քամերուցի յաղթանակ ժամ Մարսի (12րդ), պարտութեան մատնելէ ետք բերդապահ Կրեկորի Քուիէն:

Առաջին հանգրուանի մրցումներուն մեծագոյն յաղթանակը հանդիսացաւ փոխ ախոյեան Մոնաքո, որ իր դաշտին վրայ 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Պորտոն, շտրիխի՝ Շապանի Նոնտայի (Քոնկո) նշանակած երկու կոլերուն (32րդ եւ 57րդ՝ փենալթիով):

Մարսի 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Կէնկանը՝ այս վերջինին դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին: Մրցումին կորուստով վայրկեաններուն յաղթանակ Խարաիի մարտի (Փղոսկրեայ Ափոնը) նշանակեց կոլը:

«Փարք տէ Փրէնս»ի մէջ, մայրաքաղաքի կազմը՝ Փարիս Սէն ժերմէն 0 - 0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Պասիայի հետ: Մրցումին կը բացակայէր Սէն ժերմէնի նորեկ մարզիկ՝ Փաուլեթա (կախակայումս):

Առաջին հանգրուանի մրցումներուն, միայն վեց խումբեր յաջողեցան յաղթանակ արձանագրել, մինչև մնացեալ չորս ճակատումները վերջ գտան հաւասարութեամբ. ընդամենը նշանակեցաւ 15 կոլ, որոնց չորսը՝ փենալթիով:

Ստորեւ՝ Ա. հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Մոնաքո - Պորտո	2 - 0
Օքսէն - Նիս	1 - 2
Կէնկան - Մարսի	0 - 1
Լանս - Լը Մանս	0 - 0
Մէս - Ամաքսիո	0 - 1
Մոնփելիէ - Ռէնս	1 - 1
Փարիս Սէն ժերմէն - Պասիա	0 - 0
Սոչո - Նանթ	2 - 1
Թուլուզ - Սթրասպուրկ	1 - 1
Լիլ - Լիոն	1 - 0

ՊԵՔՀԱՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱՆՈՎ ԿՐԵՅ ՌԵԱԼԻ ՇԱՊԻԿԸ

Անգլիացի միջազգային մարզիկ Տէյվիտ Պէքիամ անցեալ Շաբաթ օր առաջին անգամ ըլլալով կրեց իր նոր ակումբին՝ Ռէալ Մատրիտի շապիկը, երբ Պէյճիկի մէջ (Չինաստան) անոր կազմը ճակատեցաւ Չինաստանի հաւաքակաւին դէմ:

Թիւ 23 շապիկը կրող Անգլիոյ ֆութպոլի ազգային խումբին խմբապետ՝ Պէքիամ իր առաջին մրցումին թէ՛ն կոլ չնշանակեց, սակայն աստղերով հարուստ անոր կազմը արձանագրեց 4-0 արդիւնքով յաղթանակ մը:

Մրցումին 12րդ վայրկեանին փորթուգալից Լուիս Ֆիլո բացաւ հաշիւը, 72 հազար համակիրներու ներկայութեան: Ֆեռնանտո Մորիէն-թէս նշանակեց յաջորդ երկու կոլերը (80րդ եւ 90րդ), մինչև մրցումին կորուստով վայրկեաններուն խալիէ Փորթիլիո նշանակեց սպանական կազմին չորրորդ եւ վերջին կոլը:

Իր կատարած այս մրցումին օր մը ետք, երէկ Ռէալ Մատրիտ շարունակելով իր շրջապատուը մեկնեցաւ Ճափոն: Անիկա վաղը ցուցադրական մրցում մը պիտի կատարէ Ճափոնի խումբերէն՝ Թոքիո Ֆ. Քի դէմ:

Ռէալ Մատրիտի կատարած երէկուան փորձերուն ընթացքին ներկայ էին 45 հազար հանդիսատեսներ: Նախքան փորձերը սկսիլը, սպանական կազմին մարզիկները դիմաւորեցին պատանիներ, որոնք մարզիկներուն ծաղիկներ տուին:

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ Ս. ՇՈՒԶԱՆ ՄԱՆԿԱՄԱՌԻՐ



ՅԱՏՈՒԿ ԴԻՐՈՒԹԻՒՆ ԱՁԽԱՏՈՂ ՄԱՅՐԵՐՈՒ

Մանկամտուրը ունի յատուկ անճամկազմ, կարող հիւանդապահուիլ եւ պատասխանատուութիւնը յանձնուած է Ս. Շուշան մանկամտուրի քոյրերին:

Մանկամտուրի տնօրէնութեան: Հեռաձայն՝ (01) 449580, Էջրեֆիէ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՉԵԶԵՆԻՈՅ ԸԱՐՅՈՎ ՓՈՒԹԻՆ ԿԸ ՄԱՅ ԱՆԴՐԴՈՒԵԼԻ



Թի. Էն. Թի.ի համապատասխանող պայթուցիկ նիւթը պայթեցնելով:

Յարձակումը նորագոյն յիշեցումն էր, որ Չեչենիոյ մէջ Կիւնեյիւնըրը ռուսերու դէմ պատերազմելու իրենց դատէն չեն հրաժարած՝ իրենց սեփական պետութիւնը հաստատելու առաջադրութեամբ:

Սակայն նախագահ Վլատիմիր Փութին, որ մերժած է ընթացողներուն հետ բանակցիլ, Կոնտրոլ ընտանիքներուն ցաւակցական նամակ մը յղած է առանց որեւէ ակնարկութեան, թէ Կիւնեյիւնըրական արշար աւարտելու կը մտնենայ:

Փութին Շաբաթ օր շեշտած է, որ «սահաբէկիչները իրենց ոճրային միջոցներով մեզի թելադրանք պիտի չկատարեն: Անոնց արիւնալի ոճիրները քաղաքական խաղաղարար գործընթացին վերջ պիտի չտան», ըսած է ան:

Փութին Մոսկով արտաքին գործերի նախարար Վերգէյ Իվանովը, որ անմիջապէս պաշտօնապրկած է շրջանին հսկող Կիւնեյիւնըրական գումարտակին հրամանատարը:

Մոսկովը քաղաքայիններու համար փակ քաղաք մըն է պաշտպանուած՝ Կիւնեյիւնըրական բազմաթիւ անցարգելիներով:

Մեկնաբաններու համաձայն, Կրեմլինի պաշտօնատարները տագնապէն դուրս գալու միջոց չեն տեսներ, մինչ քանակը ինքնին կը թուի շփոթ վիճակ մը ունենալ:

Ներքին գործոց նախարարութեան մէկ պաշտօնատարը յայտնած է, թէ պէտք է վարժուիլ այն գաղափարին, թէ «Չեչենիոյ եւ անոր շրջակայ վայրերուն մէջ պատերազմը վերջ չէ գտած»:

Մ. ՆԱՎԱԳՆԵՐ, Հնդկաստան, Չինաստան եւ Ֆրանսա դատապարտած են յարձակումը:

ԼԻՊԵՐԻԱ

ՄՈՆԻՐՈՎԻԱ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԱՊՐԻԼ ԼԱՐՈՒԱԾ ՄԹՆՈԼՈՐՏ ՄԸ



ՄՈՆԻՐՈՎԻԱ, 3 (ԱՅՓ).- Լիպերիոյ մայրաքաղաք Մոնրովիոյ ռազմաճակատը լարուած, սակայն հանդարտ էր Կիրակի օր՝ արեւմտեան ափրիկեան խաղաղարար ուժերու առաջին բաժնին ժամանումին նախօրեակին:

Շաբաթ օր նախագահ Չարլզ Թեյլըրի ուժերը յարձակած են մայրաքաղաքին ռազմավարական կարեւորութիւն ունեցող նաւահանգիստը գրաւելու համար ընթացող ուժերին, սակայն անոնք ետ մղուած են:

Թէեւ Կիրակի օր ծանր զինքերով բախումներ չկային, այսուհանդերձ ընթացող հրամանատար մը յայտնած է, թէ իր ուժերը յաւելեալ բախումներ կ'ակնկալեն, հակառակ խաղաղարար ուժերու մօտալուտ ժամանումին:

Թեյլըր Շաբաթ օր արեւմտեան ափրիկեցի բանագնացներու խոստացած է, որ Օգոստոս 11ին պիտի հրաժարի իր պաշտօնէն, առիթ տալու համար միջազգային միջնորդութեամբ խաղաղարար գործընթացին, որ արդիւնք տայ:

ՓՈՐՈՒԳԱԼ

ԱՀԱՒՈՐ ՀՐԴԵՂՆԵՐԸ ԱՐԴԻՆ ԻՍԿ 5 ԶՈՀ ԽԼԱԾ ԵՆ

Փորթուգալ 20 տարուան ամէնէն ծանրակշիռ աղէտներէն մէկը կը դիմագրաւէ անցեալ շաբաթուրէն ի վեր: Անոր նախածնէն մէջ ծայր տուած հրդեհները 5 ԿՈՀ խլած են արդէն:

Լիպպոն Շաբաթ օր Եւրոպական Միութեան օժանդակութեան դիմած է՝ պայքարելու համար հրդեհներուն դէմ, որոնք անցեալ Կիրակի օր ծայր տուած են եւ հարուածած են մայրաքաղաք Լիպպոնի հիւսիսային եւ արեւելեան գօտիները:

Եւրոպայի մեծ մասը ներկայիս կը դիմագրաւէ չափազանց ցած համեմատութեամբ անձրեւներ եւ շատ բարձր ջերմաստիճաններ: Սպանիա եւ Ֆրանսա հապարտոր հեթաբարներ անտառ կորսնցուցած են:

Անտառային հսկայ հրդեհներ կը դիմագրաւէ նաեւ արեւմտեան Քանատայի Ռոքի Մաունթընս շրջանը: Պաշտօնատարներու համաձայն, Պրիթի Քոլիւսիա եւ Ալպերթա նահանգներուն մէջ երէկ 400 հրդեհներ կային: Նախատեսութեանց համաձայն բարձր ջերմաստիճաններ եւ չափազանց ուժեղ հովեր պիտի շարունակուին՝ թափ տալով հրդեհներուն:

Չափազանց բարձր ջերմաստիճաններու պատճառով երաշտը Չինաստանի մէջ 8,6 միլիոն մարդ կրկնած է ընկալի շուրջ:

Արեւելեան Սուտանի մէջ 70 տարուան ամէնէն ծանրակշիռ ողորումները տասնեակ հապարտոր մարդիկ անտուն ձգած են:

Balkan Holidays
TRANSLITEX TOURS
ԴԵՊԻ ՎԱՌՆԱ ԵՐՁԱՊՏՈՅՏՆԵՐՈՒ
36 ՏԱՐՈՒԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

Varna Summer

245\$ սկսեալ

2եր թռիչքները կառավարող մեր սեփական օդանաւերով նուազագոյն սակեր 245\$ էն սկսեալ (ներառեալ շրջապտուտին հիմնական ծախսերը)

Balkan Holidays
VARNA EXPERT NO. 1
Look after No. 1. Let No. 1 Look after you.
CORNICH MAZRAA WAKF ROOM CENTER - BANK AUDI
TEL.: 1/304553 - 304563 FAX: 9611/310424 BEIRUT - LEBANON

18 ԶԵՐԲԱԿԱԼԵԱԼՆԵՐԸ ՊԻՏԻ ԶՆԵՌԱՑՈՒԻՆ ...

հատակներու փաղանգներ» խմբակին:

Իսրայէլի Կանոնք կ'ամբաստանէ իսրայէլեան թիրախներու դէմ յարձակումներու յանցանքով:

Պ ա ղ է ս տ ի ն ց ի բարձրաստիճան պաշտօնատար մը Շաբաթ օր յայտնած է, թէ ձերբակալու թիւն էր «ամերիկեան ճնշումներ» արդիւնք են եւ Իսրայէլի գիտակցութեամբ տեղի ունեցած են:

Կարճ ժամանակ ետք, խմբակը հաղորդագրութեան մը մէջ յայտարարած էր, թէ Յունիսի վերջերուն պաշտօնատարներու հատմաններու կողմէ յայտարարուած Կինսդուլէն պիտի քաշուի:

Երէկ սակայն, անհկա յետո կոչած էր այդ յայտարարութիւնը, Կգուշացնելով, թէ բանտարկեալները այլ տեղ փոխադրելու որեւէ փորձ Կինսդուլը կրնայ վտանգել:

Դէտերու կարծիքով, ձերբակալութիւնները Արաֆաթի շուրջ պաշարման օղակը քակելու ճիգերուն ծիրէն ներս կ'իյնան:

Սակայն իսրայէլացի բարձրաստիճան պաշտօնատար օր Շաբաթ օր յայտնած է, թէ հակառակ պաշտօնատարներու քայլին Իսրայէլի Կայն մեկուսացած պահելու քաղաքականութիւնը որեւէ փոփոխութիւն պիտի չկրէ:

Շարունակուած Ա. Էջէն ի կը դժուարացնէ, փոխանակ օգնելու անոր որ հարցերը լուծէ:

Ան «Հատեց» թերթին յայտնած է, թէ խաղաղութեան գործընթացը առաջ մղելու լուսագոյն ձեւը Ապպաւի դիրքին ամրապնդումն է եւ «ասիկա կրնան իսրայէլացիք ընէլ», շեշտած է ան:

Միւս կողմէ, պաշտօնատարներու կառավարութիւնը Շաբաթ օր որոշած է միջազգային արշարի մը ձեռնարկել, Իսրայէլի կողմէ

Այս յորդանանի շուրջ «սպառնալիցութեան պարիսպ»ին կառուցման դէմ:

Գետնի վրայ, պաշտօնատարները մը սպաննուած է երէկ Ռամալլայի մէջ իսրայէլացի ոստիկաններու կողմէ, անցարգելի մը փախուստ տալ փորձելէ ետք:

Իսկ իսրայէլեան բանակը հարաւային Կապալի մէջ հրէական բնակեցման վայրի մը մօտ 3 հեքթար հող գրաւած է:

Յարձակումը նորագոյն յիշեցումն էր, որ Չեչենիոյ մէջ Կիւնեյիւնըրը ռուսերու դէմ պատերազմելու իրենց դատէն չեն հրաժարած՝ իրենց սեփական պետութիւնը հաստատելու առաջադրութեամբ:

Սակայն նախագահ Վլատիմիր Փութին, որ մերժած է ընթացողներուն հետ բանակցիլ, Կոնտրոլ ընտանիքներուն ցաւակցական նամակ մը յղած է առանց որեւէ ակնարկութեան, թէ Կիւնեյիւնըրական արշար աւարտելու կը մտնենայ:

Փութին Շաբաթ օր շեշտած է, որ «սահաբէկիչները իրենց ոճրային միջոցներով մեզի թելադրանք պիտի չկատարեն: Անոնց արիւնալի ոճիրները քաղաքական խաղաղարար գործընթացին վերջ պիտի չտան», ըսած է ան:

Փութին Մոսկով արտաքին գործերի նախարար Վերգէյ Իվանովը, որ անմիջապէս պաշտօնապրկած է շրջանին հսկող Կիւնեյիւնըրական գումարտակին հրամանատարը:

Մոսկովը քաղաքայիններու համար փակ քաղաք մըն է պաշտպանուած՝ Կիւնեյիւնըրական բազմաթիւ անցարգելիներով:

Մեկնաբաններու համաձայն, Կրեմլինի պաշտօնատարները տագնապէն դուրս գալու միջոց չեն տեսներ, մինչ քանակը ինքնին կը թուի շփոթ վիճակ մը ունենալ:

Ներքին գործոց նախարարութեան մէկ պաշտօնատարը յայտնած է, թէ պէտք է վարժուիլ այն գաղափարին, թէ «Չեչենիոյ եւ անոր շրջակայ վայրերուն մէջ պատերազմը վերջ չէ գտած»:

Մ. ՆԱՎԱԳՆԵՐ, Հնդկաստան, Չինաստան եւ Ֆրանսա դատապարտած են յարձակումը:

Յորդանանի թագաւոր Ապտալլա Բ. այս գծով երէկ յոյս տեսած հարցապարոյցի մը մէջ յայտնած է, թէ Արաֆաթի մեկուսացումը անոր չափաւորական վարչապետ Մահմուտ Ապպաւի կեանքը աւել

ԱՅՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

• Over Bed Table

• All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

HOME MEDICAL SERVICES

ՅՈՒՏԱՍՐԱԸ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵՆԸ, Բ. ՅԱՐԿ ԵՆԻ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... ... OR WHERE YOU NEED.

ՍԱՏՏԱՄ ԸՒՄԵՅՆԻ ԵՐԿՈՒ ՈՐԴԻՆԵՐՈՒՆ՝ ՈՒՏԱՅԻ ԵՒ ԲՈՒՍԱՅԻ...

Շարունակուած Ա. Էջէն Ուտայի եւ Քուսայի սպանութեանէն ետք ուժերուն փոխանցուած բազմաթիւ տեղեկութիւններու լույսին տակ:

Միւս կողմէ, ամերիկեան ուժերուն դէմ յարձակումները կը շարունակուին: Մայիս 15ն վեր անոնք 53 Կիւնեյիւնըր կեանք խլած են:

ԲՐՏԱԿԱՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՍՐԱԿԻ ՄԸ ԸՆԴՈՒՄ ԴԵՏԸ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԾ

Այլ գիծի վրայ, ամերիկեան ուժեր քրտական իսլամական ժամաա Իսլամիա խմբակին հողէտը պետ Ալի Ապտիլ Ապիլը եւ 14 ուրիշներ ձերբակալեցին հիւսիսային Հալապա քաղաքին մէջ, ըստ իսրայէլեան մէկ պաշտօնատարին:

Ան երէկ ըսած է, որ ամերիկացի շուրջ 2000 Կիւնեյիւնըր կողմի ուղղաթիռներու Կորակցութեամբ Շաբաթ օր շրջապատած են Ապտիլ Ապիլի տունը եւ ձերբակալած Կայն, անոր եղբայրը՝ մոլլա Օմար եւ թիկնապահներ:

Պաշտօնատարը յայտնած է, թէ իսրայէլը կը պարմանայ, որ «ամերիկացիք կրնան ձերբակալել անոր հողէտը առաջնորդը, որ երկար ատենէն ի վեր Պասա Կուսակցութեան եւ Իրաքի նախկին վարչակարգին դէմ պատերազմ հոշակած է», ամերիկեան ուժերը ամբաստանելով «սպառնալիցութեան եւ Սատտամ Հիւսէյնի վարչակարգին թշնամիները» ձերբակալելու յանցանքով:

Իսրայէլեան մօտիկ աղբիւրներու համաձայն, ամերիկեան ուժերը իսրայէլեան պահանջած են, որ Արաբի իր գրասենեակները պարպէ:

DAY WATER

RECOMMENDED FOR BABIES

Clean & Safe Water

Under Hygienic Condition

NATURAL - PURELIGHT - LOW IN SODIUM

Free Delivery

19 Litre @ 2000L

Mr Jim Keushkerian owner

DAY WATER, Tel.: 03/435298